Թեստ 2

1-12-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

1. Ընդգծված *ճ*-ն արտասանվում է */չ/*

1) վերջք
2) համճոզ
3) զարկճակ
4) կիսաճի

բառում:

2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է(փակագծերում նշվածներից որևէ մեկը)՝

1) դար...ին, հղ...անալ, ջրար...ի (բ կամ փ)
2) տր...ակ, դեր... ան, փոր...անք(ծ կամ ց)
3) վա...վռուն, կա...կառել, խո...շակ (ր կամ ռ)
4) ս...բուկ, ը...բոշխնել, փա...փուշտ (մ կամ ն)

3. Բոլոր բառերի բաղադրիչները անջատ գրվող շարքն է՝

1) ուս (ուսի), ուրախ (զվարթ), վեց (հազար)
2) մի (հարկանի), միտք (անել), լույս (ընծայել)
3) թույլ (տալ), իրոք (որ), ամեն (ինչ)
4) առ (հավետ), ինչպես (թե), մինչև (իսկ)

4. Դարձվածքի բացատրության սխալ կա

1) թիկունք թիկունքի տալ- իրար օգնել
2) ոտքերն ընկնել- աղաչել
3) գլխին ջուր մաղվել- զվարճանալ
4) ոտքի տակ ընկնել- խանգարել

շարքում:

5. Բարդ բառերի շարքն է՝

1) գետաբերան, վրեժխնդիր, դասարան
2) խաղընկեր, դարակես, երկաթուղի
3) նյութապաշտ, գերակշիռ, գետափ
4) ոսկեգույն, միջնապատ, գյուղացի

6. Հականիշ բառազույգերի շարքն է՝

1) գլխավոր - անէական, բարդ - խրթին
2) ամբարտավան – համեստ, խենթ - գիժ
3) դեռատի - զառամյալ, լավատես – հոռետես
4) հակիրճ - երկարաշունչ, գաղտնի – թաքուն

7. Ածական կա

1) Պարզվում է, որ հոգնած ճամփորդը օտարերկրացի է:
2) Երգող թռչունը վանդակում դես ու դեն էր թռչկոտում:
3) Հիվանդի վիճակը օրեցօր լավանում է:
4) Նա ամուր առողջություն ուներ:

նախադասության մեջ:

8. Մակբայների շարքն է՝

1) այժմ, դանդաղ, հավետ, այլուր
2) հետզհետե, արագ, դեպի, ամենուր
3) նախօրոք, հոտնկայս, որևէ, նորից
4) հապճեպ, վաղուց, կրկին, հանկարծ

9. Կապ խոսքի մաս կա

1) Ծաղիկների բույրը տարածվեց սենյակով մեկ:
2) Շնիկը կուչ էր եկել դռան առաջ:
3) Հետո մասնակցեցինք միջոցառմանը:
4) Նրանք երազեցին անկախ հայրենիք:

նախադասության մեջ:

10. Տարերային ահեղ ուժերը մեզ կիսեցին, բաժանեցին առժամանակ, ...

նախադասության քերականական և տրամաբանական շարունակության տարբերակն է՝

1) չնայած թոհուբոհի մեջ էին ժամանակի ու տարածության բոլոր իրերը:
2) որոնք անցան մի վայրկյանի պես:
3) որ անպարտելի կարոտով համակված՝ անթիվ դարերից հետո նորից գտնենք իրար:
4) բայց միշտ անբաժան ու միացած, անմեկին սիրով, իրարից անհագ:

11. Փոխաբերություն պարունակող հատվածն է՝

1) Եղնիկի հորթը՝ մամուռը դնչին,
   Գնում էր իր մոր բառաչի վրա...
2) Հայաստա՛ն, անունդ տալիս,
   ժայռի մեջ մի տուն եմ հիշում...
3) Կրակ է թափում երկինքը այն մով,
   Ոի հևում է օդն ամառվա տապից :
4) Ես օգնեցի բոլորին, ես ինձ միայն չօգնեցի,
   Կորով տվի ամենքին, միայն ինքս հոգնեցի:

12. Կետադրական սխալ կա

1) Առջևից գնում էր Պապը վեհաշուք ու սիգապանծ, սևաբաշ ոսկեգույն նժույգով, երկար սև թիկնոցով:
2) Թռչունը կտուցով ծակեց ծառի՝ հարյուրամյակների ընթացքում կոշտացած կեղևը:
3) Հայրենյաց բարերարի՝ Գևորգ Մարզպետունու անունը սիրելի էր թե՛ արքունիքում, թե՛ ժողովրդի մեջ:
4) Վրանի մուտքի առաջ՝ կրակի կողքին, մի փոքրիկ տղա օջախի մեջ սունկ էր խորովում:

նախադասության մեջ:

Գրի՛ր 13-16-րդ առաջադրանքների պատասխանը

13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:
Գրի՛ր միայն նախադասությունների համարները:

1. Նա կարծում է, որ բավական է ունենալ պոլիէթիլենային մի մեծ պարկ, որը պետք է հագցնել որևէ ծառի ճյուղի և ամուր կապել:
2. Որքան ավելի շոգ է, այնքան ավելի արագ է կատարվում գոլորշիացման գործընթացը:
3. Ավստրալացի մի օդաչու զարմանալի միջոց է առաջարկում ծարավը հագեցնելու համար, եթե ջուր չկա:
4. Տերևներից գոլորշիացող խոնավությունը մնում է պարկի ներսում, խտանում, և այս հնարամիտ միջոցի շնորհիվ ստացվում է օրական 1 լ ջուր:

Պատասխան՝ _____

14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Իր ազնվությունն ու համարձակությունը նա ժառանգություն է ստացել ծնողներից:

Պատասխան՝ սխալ է՝ _____
պետք է լինի՝ _____

15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Մեր ստեղծարար ոգուն ու առաջընթացին խոչընդոտող ուժերին կարող ենք դիմագրավել միայն հավաքական միասնականությամբ:

Պատասխան՝ *սխալ է՝* _____
պետք է լինի՝ _____

16. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

.Ելավ միջահասակ և ամրակազմ մի մարդ, մեկը ....., որոնք լրացնում են քառասունը, ... են թողնում հիսունը և նույնիսկ վաթսունին հասնելով՝ ..... իրենց քայլվածքը, դեմքի արտահայտությունը և ..... :

(ինքը, փոխել, նա, հետև)

Պատասխան՝ 1.---------- *2.*----------

3.---------- *4.*----------

17-32-րդ առաջադրանքները կատարի՛ր ըստ տեքստի

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման օրն էր: 2. Հայոց Արտաշես թագավորը հյուրընկալել էր կարթագենցի զորավար Հաննիբալին:

3. Պարսպի հիմնափոսում թագավորը մարգարիտներ նետեց, հետո բերեցին հայկական հնամենի մասունքներ, որոնցով, ըստ ավանդության, ավելի պիտի ամրապնդվեին քաղաքի որմերը: 4. Դրանց մեջ կարթագենցի զորավարը նկատեց կարմրաժեռ մի ուլունք:

5. — Սա տաշված է դեղձի կորիզից, - ասաց Հաննիբալը: 6. — Երևի ձեր հները բերել են Պարսկաստանից:

7. — Ինչո՞ւ Պարսկաստանից, չինացիներն էլ դեղձ ունեն, բայց դեղձը նաև հայկական պտուղ է. Հայաստանից են դեղձ տարել Պարսկաստան: 8. «Ո՛չ հայն իր դեղձենուն կխփի, ո՛չ պարսիկը՝ դստերը»: 9. Սա պարսկական առած է: 10. Դեղձենի ունեցող պարսիկն այսպիսի խոսք չէր ասի, - պատասխանեց Արտաշեսը:

11. Հելլեն իմաստասեր Թեոֆրատը չգիտեր այդ առածը և գրել է, թե այս պտուղը «պերսիկ» կամ պաբսկական սալոր է կոչվում. այն Պարսկաստանից է տարվել Հռոմ ու Հունաստան, - առարկեց մեծահամբավ կարթագենցին:

II

1. — Երբ հայկական դեղձը Եվրոպա էր տարվում, — պատմում է Արտաշեսը, - Հայաստանը Պարսկաստանի գերիշխանության տակ էր, ու դեղձ արտահանողները պտուղը ներկայացնում էին որպես պարսկական:

2. — Ափսո՜ս, - օրորեց գլուխը զորավարը: 3. — Դեղձուտները Հայաստանում լինեն, և դեղձին «պերսի՜կ» կոչեն: 4. Անարդար է:

5. Հզորները միշտ խաթարել են ամեն բան, - լրացրեց հայոց արքան:

6. Հաննիբալը մի պահ լռեց, խոհուն հայացքով ձեռքերի մեջ շուռումուռ տվեց դեղձի հղկված կորիզն ու ասաց.

— Կախի՛ր սա քաղաքի դարպասի ճակատին և ի լուր ողջ աշխարհի գրի՛ր, որ հայկածին դեղձը «պերսիկ» կոչվելուց հազար տարի առաջ Հայկի երկրում նրա կորիզներից ուլունքներ են շինել ու զարդարել գեղաչվի հայուհիների պարանոցները:

17-20-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

17. I հատվածից դու՛ս գրիր իր ցույց տվող երկու հատուկ անուն:

Պատասխան՝ _____

18. I հատվածից դու՛ս գրիր հարկադրական եղանակի բայը:

Պատասխան՝ _____

19. I հատվածից դու՛ս գրիր հարաբերական դերանունը:

Պատասխան՝ _____

20. II հատվածից դու՛ս գրիր բացառական հոլովով դրված գոյականը:

Պատասխան՝ _____

21-25-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

21. Որոշյալ դերանուն է՝

1) դրանց
2) ձեր
3) ողջ
4) երբ

22. I հատվածում բաղադրյալ ստորագյալ կա

1) 2 -րդ
2) 3 -րդ
3) 4 -րդ
4) 5 -րդ

նախադասության մեջ:

23. II հատվածում ըղձական եղանակի բայ կա

1) 1 -ին
2) 3 -րդ
3) 5 -րդ
4) 6 -րդ

նախադասության մեջ:

24. I հատվածում վերաբերական պարունակող նախադասություն է՝

1) 2 -րդը
2) 4 -րդը
3) 6 -րդը
4) 7-րդը

25. I. 11-րդ բարդ նախադասության բաղադրիչ պարզ նախադասությունների քանակն է՝

1) 2
2) 3
3) 4
4) 5

26-29-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

26. Գրի՛ր *խաթարել* բառի որևէ հոմանիշ:

Պատասխան՝ _____

27. II հատվածից դու՛ս գրիր թվականը:

Պատասխան՝ _____

28. Տեքստից դու՛ս գրիր հրամայական եղանակի բայերը:

Պատասխան՝ _____

29. Գրի՛ր II հատվածի այն բարդ նախադասության համարը, որը կապակցվել է հարաբերական դերանունով:

Պատասխան՝ _____

30-32-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

30. Տեքստից չբխող կամ նրա բովանդակությանը հակասող միտքն է՝

1) Հայոց Արտաշես թագավորը Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման օրը հյուրընկալել էր կարթագենցի զորավար Հաննիբալին:
2) Թագավորը, ըստ ավանդության, հիմնափոսում մարգարիտներ, հնամենի մասունքներ է նետել:
3) Դրանց մեջ դեղձի կորիզից պատրաստած կարմրաժեռ ուլունք է եղել:
4) Հելլեն իմաստասեր Թեոֆրատն ապացուցել է, որ դեղձը պարսկական պտուղ է, քանի որ Պարսկաստանից են տարել ուրիշ երկրներ:
5) Արքայի բացատրությունից զորավարը հասկացել է իրականությունը և ասել, որ շատ տարիներ առաջ հայերը դեղձի կորիզներից նույնիսկ ուլունքներ են պատրաստել:

31. *Դրանց մեջ կարթագենցի զորավարը նկատեց կարմրաժեռ մի ուլունք*

նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

1) զորավարը – հասարակ գոյական, որոշյալ առում
2) նկատեց - բայ, անցյալ կատարյալ ժամանակաձև
3) կարմրաժեռ – հարաբերական ածական
4) ուլունք - գոյական, ուղղական հոլով

32. Դեղձենի ունեցող պարսիկն այսպիսի *խոսք* չէր ասի,- պատասխանեց Արտաշեսը

նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝

1) ենթակա
2) հանգման անուղղակի խնդիր
3) ուղիղ խնդիր
4) ներգործող խնդիր